ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 1, 1951 Общественные науки

Ա. Ս. Մարուխյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Սոցիալիզմին նախորդող դասակարգային բոլոր հասարակակարգերում աշխատանքը տիրող դասակարգերի համար ծառայել է որպես աշխատավոր մասսաների շահագործման միջոց, շահագործողների հարստացման աղբյուր։

Կապիտալիստական կարգերում աշխատավոր մարդը կաշկանդված է կապիտալիստական ստրկության շղթաներով։ Աշխատանքը աշխատավորների համար ծանր լուծ է, որը նրանք քաշ են տալիս՝ իրենց խղճուկ գոյությունը պահպանելու համար։

Սոցիալիստական հասարակակարգում, որտեղ տիրապետում է արտադրության միջոցների ու գործիքների սոցիալիստական հանրային սեփականությունը, որտեղ թե՛ քաղաքում և թե՛ գյուղում ոչնչացված են մարդու կողմից մարդուն շահագործելու բոլոր պայմանները, արմատապես վերափոխվել է աշխատանքի բնույթը և նշանակությունը։

Աշխատանքը սոցիալիստական հասարակակարգում դարձել է փառքի ու պատվի գործ։

Սովետական Միության մեջ, կապիտալիզմի ոչնչացման հետևանքով աշխատանքը դադարել է շահագործման ու աշխատավորների համար լոկ գոյության աղբյուր լինելուց։ Նա դարձել է մարդու ստեղծագործական կարողությունների, նրա տաղանդի անսահմանափակ զարգացման ու դրսևորման աղբյուր, համաժողովրդական, սոցիալիստական հարստության, նյութական բարիքների ավելացման, հասարակության բարեկեցության բարձրացման, սովետական պետության հզորացման ամրապնդման աղբյուր։

«Այստեղ աշխատավոր մարդը պատիվ ունի,—ասում է ընկեր Ստալինը 1935 թվի ստախանովականների Համամիութենական առաջին խորհրդակցությունում,— այստեղ նա աշխատում է ոչ թե շահագործողների համար, այլ իրեն համար, իր դասակարգի համար, հասարակության համար։ Այստեղ աշխատավոր մարդը չի կարող իրեն լքված ու մենակ զգալ։ Ընդհակառակը, մեզ մոտ աշխատավոր մարդն իրեն զգում է իր երկրի ազատ քաղաքացի, մի տեսակ՝ հասարակական գործիչ։ Եվ եթե նա լավ է աշխատում և հասարակությանը տալիս է այն, ինչ որ կարող է տալ,—նա աշխատանքի հերոս է, նա փառքով է պսակվում»։[1]

Սովետական ամբողջ ժողովուրդը, բոլշևիկների պարտիան, Սովետական պետությունը բարձր են գնահատում արդյունաբերության, գյուղատնտեսության, տրանսպորտի աշխատավորների, հատկապես ստախանովականների, գիտության ու տեխնիկայի նորարարների աշխատանքային սխրագործությունները։

---

1 *Ի. Ստալին — Լենինիզմի հարցերը, էջ 610, հրատ. 1940 թ. Երևան։*

Կոլտնտեսային կարգերի հաղթանակը լիովին ոչնչացրեց անհատական տնտեսության պայմաններում գոյություն ունեցող աշխատանքային կաշկանդվածությունը։ Խոշոր սոցիալիստական մեքենայացված տնտեսության մեջ լայնորեն բացահայտվեցին աշխատավոր գյուղացու աշխատանքային ունակությունները և զարգացման հեռանկարները։

Որ աշխատանքը դարձել է պատվի ու հերոսության գործ, ցույց է տալիս կոլտնտեսության հանրային աշխատանքներում աշխատունակ կոլտնտեսությունների մասնակցության թվի սիստեմատիկ ավելացման փաստը։ Այսպես, օրինակ, եթե 1932 թվին ռեսպուբլիկայի կոլտնտեսություններում հանրային աշխատանքներին ակտիվորեն մասնակցող աշխատունակ տղամարդկանց, կանանց ու պատանիների թիվն ընդունենք 100 տոկոս, ապա 1937 թվին մասնակցողների թիվը կլինի 242, 1940 թվին՝ 260։

Կոլտնտեսականների հանրային աշխատանքներին մասնակցելու պատկերը ցույց է տալիս վաստակած աշխօրերի աճը մեկ կոլտնտեսության, կոլտնտեսական մեկ ընտանիքի և մեկ աշխատունակի կողմից։

Աղյուսակ 1

Աշխօրերի վաստակումը Հայկական ՍՍՌ կոլտնտեսություններում, տոկոսներով 1932 թվի նկատմամբ. [1]

	1937	1940	1945	1948
Մեկ կոլտնտեսության	470,2	640,5	572,6	607,1
Մեկ տնտեսության	127,3	158,2	148,7	153,2
Մեկ աշխատունակի	140,1	196,1	196,1	205,0

Կոլտնտեսականների աշխատանքային ակտիվությունն անպայմանորեն հետևանք է ինչպես գյուղատնտեսության ինտենսիֆիկացման, այնպես էլ կոլտնտեսություններում աշխատանքային գիտակցված սոցիալիստական կարգապահության բարձրացման, կոլտնտեսության հանրային տնտեսության ավելացման, բոլոր կոլտնտեսականների նյութական շահագրգռվածության բարձրացման և, վերջապես այն բանի, որ հանրային տնտեսությունը դարձել է ամեն մի կոլտնտեսականի եկամտի հիմնական աղբյուրը։ Պարտության և պետության միջոցառումների շնորհիվ մի քանի տարվա ընթացքում հնարավոր դարձավ արմատապես փոխել և բարելավել կոլտնտեսականների վերաբերմունքը հանրային արտադրության նկատմամբ։

Այս դրությունը վառ կերպով ցույց է տալիս աշխատունակ կոլտնտեսականների խմբավորումը՝ ըստ ստացած աշխօրերի (էջ 21, աղ. 2)։

Ինչպես տեսնում ենք, կայուն կերպով ավելանում է կոլտնտեսականների այն խումբը, որոնք շատ աշխօր են վաստակում և դրան հակառակ խիստ պակասում է քիչ աշխօր վաստակող կոլտնտեսականների թիվը։

Այսպես՝ այն դեպքում, երբ 1940 թվին մինչև 50 աշխօր վաստակած աշխատունակ կոլտնտեսականների տեսակարար կշիռը աշխատունակ կոլտնտ-

[1] Այս, ինչպես և հաջորդ աղյուսակը կազմված է կոլտնտեսությունների 1932—1948 թվերի տարեկան հաշվետվությունների նյութերից։

տնտեսականների ընդհանուր թվի մեջ կազմում էր 17,5 տոկոս, 51-ից մինչև 100 աշխոր վաստակողները՝ 23,0 տոկոս, ապա 1946 թվին այն հիմնովին փոխվում է, այսինքն առաջին խմբի տեսակարար կշիռը իջել է մինչև 7,3 տոկոսի, երկրորդ խմբինը՝ մինչև 15,4 տոկոսի։ Դրան հակառակ՝ ավելացել է

Աղյուսակ 2

Կոլտնտեսության աշխատունակ անդամների մասնակցությունը հանրային աշխատանքներին (տոկոսներով)

	աշխատունակ կոլտնտեսականներ					
	1940			1949		
	տղամարդ	կին	ընդամ.	տղամարդ	կին	ընդամ.
Վաստակել են մինչև 50 աշխոր	5,4	28,5	17,7	3,2	10,9	7,3
50-ից մինչև 100	16,9	36,2	23,0	5,6	17,2	15,4
101-ից » 200	32,2	29,2	31,1	38,2	55,4	43,7
201-ից » 300	24,9	4,4	15,4	28,4	13,6	20,0
301 և բարձր	20,6	1,0	12,8	24,7	2,9	13,2
ընդամենը	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0

աշխորերի մինիմումը կատարող ու գերակատարող կոլտնտեսականների թիվը։ 101-ից մինչև 200 աշխոր վաստակած կոլտնտեսականների թիվը 31,1 տոկոսից բարձրանում է 43,7 տոկոսի, 201-ից մինչև 300 աշխոր վաստակողներինը՝ 15,4 տոկոսից բարձրանում է մինչև 20,0 տոկոսի, նույնը և տեղի է ունենում մյուս բարձր խմբերի նկատմամբ։

Նշանակալից է այն հանգամանքը, որ ավելի արագորեն պակասել է քիչ աշխոր վաստակող աշխատունակ կին կոլտնտեսականների թիվը և դգալիորեն աճել շատ աշխոր վաստակողների տեսակարար կշիռը։ Այս երևույթն ունի իր դրական երկու կողմը՝ նախ այն, որ կոլտնտեսության հանրային աշխատանքներում արմատավորվում է կնոջ աշխատանքը, և երկրորդ, որ կոլտնտեսային կարգերը գյուղում արմատապես փոխում են աշխատավոր կնոջ կյանքի պայմանները, բարձրացնում նրա հասարակական ակտիվությունը, ստեղծում բոլոր պայմանները նրա աշխատանքային կարողությունների, ստեղծագործական ինքնագործունեության ու հասարակական ակտիվության դրսևորման ու զարգացման համար, մի բան, որը կապիտալիստական կարգերում արհամարհված ու ոտնահարված է։

Կապիտալիստական և ոչ մի երկրում այսպիսի իրադրություն կնոջ կյանքում տեղի ունենալ չի կարող։

Սովետական կարգերի հաստատման հետևանքով, արտադրամիջոցների և հողի մասնավոր սեփականության ոչնչացումը և դրա հիման վրա գյուղում կոլտնտեսային կարգերի հաղթանակը ոչնչացրին մարդու կողմից մարդու շահագործումը ծնող պայմանները։ Երկրի բոլոր աշխատավորները, այդ թվում և աշխատավոր կինը, տղամարդուն հավասար հասարակա-

կան գործունեության, աշխատանքի, կրթության, հանգստի լայն իրավունք ստացավ։

Բոլոր կոլտնտեսականներին դեպի հերոսական աշխատանք, դեպի արտադրողականության բարձրացում է մղում արտադրության կազմակերպման ու բաշխման սոցիալիստական սկզբունքը, որը ասում է—յուրաքանչյուրից ըստ նրա ընդունակությունների և յուրաքանչյուրին՝ ըստ նրա կատարած աշխատանքի քանակի ու որակի։

Սոցիալիզմի այս կարևորագույն սկզբունքի հետևողական կիրառումը, աշխատանքի սոցիալիստական կազմակերպման, արտադրության պրոցեսների մեքենայացման, էլեկտրիֆիկացման ու սոցիալիստական մրցակցության կազմակերպման պայմաններում հանդիսանում է այն հզոր առաջմղիչ ուժը, որը տանում է դեպի աշխատանքի արտադրողականության բարձրացումը կոլտնտեսություններում։

Լենինը աշխատանքի արտադրողականության բարձրացման հարցը դիտում էր որպես նոր հասարակակարգի ստեղծման ու վերջնական հաղթանակի կարևորագույն պայմաններից մեկը։

Այդ մասին դեռևս 1921 թվին նա իր «Մեծ նախաձեռնություն» աշխատության մեջ գրում է. «Աշխատանքի արտադրողականությունը, վերջին հաշվով, ամենակարևորը, ամենագլխավորն է նոր հասարակակարգի հաղթանակի համար։

Կապիտալիզմն ստեղծեց ճորտատիրության օրով չտեսնված աշխատանքի արտադրողականություն։ Կապիտալիզմը կարող է վերջնականապես պարտվել և կպարտվի վերջնականապես նրանով, որ սոցիալիզմը ստեղծում է աշխատանքի նոր, շատ ավելի բարձր արտադրողականություն»[1]։

Հենց այդ նկատառումով էլ ընկեր Ստալինը ստախանովականների Համամիութենական առաջին համագումարում ասում է, որ «սոցիալիզմը կարող է հաղթել միմիայն աշխատանքի ավելի բարձր արտադրողականության բազայի վրա, ավելի բարձր, քան կապիտալիզմի պայմաններում, պրոդուկտների և սպառման ամեն տեսակ առարկաների առատության բազայի վրա, հասարակության բոլոր անդամների ունևոր և կուլտուրական կյանքի բազայի վրա։ Բայց որպեսզի սոցիալիզմը կարողանա հասնել իր այդ նպատակին և ամենից ավելի ունևոր դարձնել մեր սովետական հասարակությանը, անհրաժեշտ է ունենալ երկրում աշխատանքի այնպիսի արտադրողականություն, որը գերազանցում է առաջավոր կապիտալիստական երկրների աշխատանքի արտադրողականությունից։ Առանց դրան մտածելն անգամ ավելորդ է պրոդուկտների և սպառման ամեն տեսակ առարկաների առատության մասին»։[2]

Տնտեսության սոցիալիստական սիստեմի բազմաթիվ առավելությունների մեջ կա մի այնպիսի գլխավոր առավելություն, որը երբեք չի կարող ունենալ տնտեսության և ոչ մի ուրիշ սիստեմ։ Այդ այն է, որ երկրի ամբողջ աշխատավորությունը և առանձին վերցրած յուրաքանչյուր մարդ հիմնովին շահագրգռված է աշխատանքի արտադրողականության բարձրացման մեջ։ Այդ շահագրգռվածությունը հետևանք է այն բանի, որ աշխա-

---

[1] Լենին, Ընտիր երկեր, երկու հատորում, հատ. II, էջ 518 (հայ. հրատ.)։

[2] Ի. Ստալին, Լենինիզմի հարցերը, էջ 603—604, հրատ. 1940 թ., Երևան։

տանքի արդյունքը գնում է ոչ թե մասնավոր յուրացման ուղիով, ինչպես կապիտալիստական կարգերում, այլ գնում է համաժողովրդական սոցիալիստական բաշխման ուղիով։ Այս մի հզոր ազդակ է, որը տանում է դեպի աշխատանքի արտադրողականության անընդհատ բարձրացումը, դեպի կապիտալիզմի բոլոր մնացուկների ոչնչացումը։

Հենց այդ նկատառումներով էլ ընկեր Ստալինը ստախանովական շարժումը բնութագրեց որպես կապիտալիզմի նկատմամբ սոցիալիզմի վերջնական հաղթանակն ապահովող հզոր շարժում, որը գնում է կուլտուր-տեխնիկական վերելքի, մթերքների ու ապառման բոլոր տեսակի առարկաների առատություն ստեղծելու ուղիով։

Լենինյան-ստալինյան այս դրույթները իրենց զարգացումն ու իրականացումը ստացան սոցիալիստական շինարարության մեջ, ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառներում։

Գյուղատնտեսության մեջ տնտեսության սոցիալիստական սիստեմի հաղթանակը, նոր տեխնիկայի ու ագրոտեխնիկայի անսահմանափակ ներդրումը, նոր, տեխնիկապես գրագետ առաջավոր կադրերի ստեղծումը, կոլտնտեսային արտադրության մեջ, օրեցօր նոր որակ է ստեղծում, բարձրացնում է աշխատանքի արտադրողականությունը, համախառն և ապրանքային արտադրանքը։

Կոլտնտեսությունների աշխատանքի արտադրողականության վերաբերյալ հաշվումները դժբախտաբար հնարավոր չէ անել այնպիսի մանրամասնությամբ, ինչպես այն բազմակողմանիորեն արվում է սոցիալիստական արդյունաբերության ձեռնարկների, ֆաբրիկաների, գործարանների վերաբերյալ։

Կոլտնտեսային հատվածում այդ բանին մեծապես խանգարում է ինչպես առանձին կոլտնտեսություններում, բրիգադներում, օղակներում, այնպես էլ առանձին կոլտնտեսությունների թե աշխատած օրերի և թե ժամերի մեջ եղած քանակական ու որակական խիստ տարբերությունը, արտադրանքի նորմաների դանազանությունը, որը մեծ մասամբ լինում է մեքենայացման, բնա-կլիմայական ու հողային տարբեր պայմանների հետևանք։

Կոլտնտեսություններում աշխատանքի արտադրողականության բարձրացման պատկերը ցույց տալու համար մենք դիմել ենք մի քանի տեսակի հաշվումների, ինչպես, օրինակ, մեկ աշխօրին հասանելիք եկամտի աճման տեմպը հաշված անփոփոխ գներով, համախառն արտադրանքի աճման տեմպը մեկ կոլտնտեսության, մեկ աշխատունակի և մեկ աշխօրի նկատմամբ, արտադրանքի նորմաների գերակատարման վերաբերյալ և այլն։

Մեր հաշվումները ցույց են տալիս, որ ռեսպուբլիկայի կոլտնտեսություններում համախառն արտադրանքը 1940 թվին՝ 1937 թվի համեմատությամբ աճել է 138,2 տոկոսով, 1948 թվին՝ 152,4 տոկոսով, իսկ կոլտնտեսության աշխատանքներում մասնակցած մեկ աշխատունակ կոլտընտեսականին հասնող համախառն արտադրանքը նույն տարիներին ավելացել է 136,9 և 167,4 տոկոսով։[1]

---

[1] Տես Կոլտնտեսությունների տարեկան հաշվետվությունները, 1937, 1940, 1948 թ. թ.։

Գյուղատնտեսության համատարած կոլեկտիվացման պրոցեսն ավարտելուց հետո կոլտնտեսություններում արտադրամիջոցների, արտադրության ծավալի, սպառման ու կուտակման ֆոնդերի ավելացումը ու կոլտնտեսականների նյութական-կուլտուրական կյանքի բարելավումը խոշոր սոցիալիստական տնտեսության առավելությունների լիակատար արդյունքն է։

Կոլտնտեսությունների կազմավորման առաջին շրջանում, արտադրության աճը արդյունք էր ոչ միայն կոլտնտեսությունների անդամների քանակական աճման, այլև արդյունք էր աշխատանքի արտադրողականության բարձրացման, քանի որ հողի, արտադրամիջոցների հանրային օգտագործումը և աշխատանքի կոլեկտիվ կատարումը անհամեմատ արտադրողական է, քան նրա անհատական օգտագործումը, մանավանդ որ կոլեկտիվ տնտեսությունների կազմակերպումով լայն հնարավորություններ են ստեղծվում գիտության ու տեխնիկայի նվաճումները արտադրության մեջ լայնորեն ներդնելու, արտադրության պրոցեսները ագրոտեխնիկապես կատարելագործելու, մեքենայացնելու համար։

Աշխատանքի արտադրողականության բարձրացման պատկերը արտահայտող կարևորագույն ցուցանիշներից մեկն էլ հանդիսանում է կոլտնտեսություններում՝ գյուղատնտեսական աշխատանքի արտադրանքի սահմանված նորմաների սիստեմատիկ կատարումն ու գերակատարումը։

Առանց վերապահումների կարելի է ասել, որ կոլտնտեսություններում արտադրանքի նորմաները մասսայաբար գերակատարվում են։ Այսպես, օրինակ, կենդանի քաշող ուժով կատարվող վարի 0,4—0,5 հեկտար նորմայի դիմաց փաստորեն ամենուրեք կատարված է 0,6—0,7 հեկտար և երբեմն ավելին, կամ բամբակի քաղհանը 0,8—0,12 հեկտարի փոխարեն ամենուրեք կատարվում է 0,12—0,15 հեկտար։ Նույնը պետք է ասել հացահատիկների մշակման նորմաների մասին։ Աշտարակի շրջանի Մոսվյանի անվան կոլտնտեսությունում քաղհանի 2500 մետր նորմայի դեպքում կոլտնտեսականների ճնշող մեծամասնությունը կատարում են 4—4500 մետր։ Կիրովականի շրջանի Ստալինի անվան կոլտնտեսությունում շաքարի ճակնդեղի առաջին նոսրացման նորմա է սահմանված 300 քառ. մետր, երկրորդ նոսրացման՝ 400 մետր, թե առաջին և թե երկրորդ դեպքում կոլտնտեսականները 50—60 տոկոսով գերակատարում են այն։[1]

Բամբակի բերքահավաքի ընդհանուրում նույնպես կոլտնտեսականները մեծ մասամբ գերակատարում են արտադրանքի նորմաները։

1948 թվին Հոկտեմբերյանի շրջանում բամբակի բերքահավաքի ժամանակ սեպտեմբեր—հոկտեմբեր ամիսներին դաշտում աշխատող կոլտնտեսականների 50—55 տոկոսից ավելին սիստեմատիկաբար գերակատարում էին իրենց տրված արտադրանքի օրվա նորման։

Այսպես, օրինակ, նույն շրջանի Արզավանդ գյուղի «Վճռական տարի» կոլտնտեսության անվանի կոլտնտեսուհի Հրանուշ Բաղդասարյանը 1947 թվի բերքահավաքի սեզոնում օրական հավաքում էր 250—260 կիլոգրամ.

[1] Հայկական ՍՍՌ Գիտ. Ակադեմիայի Տնտեսագիտության սեկտորի գիտական արխիվ. Ֆոնդ Հայկական ՍՍՌ կոլտնտեսությունները ստալինյան հնգամյակներում, գործ. աշխատանքի արտադրողականության բարձրացումը։

այդ տարում նա ընդամենը հավաքեց 10 տոննա բամբակ։ 1949 թվին նա օրվա հավաքը հասցրեց 300—424 կիլոգրամի։[1]

1949 թիվը Սովետական Հայաստանի կոլտնտեսականները նշանավորեցին աշխատանքի արտադրողականության բարձրացման նոր նվաճումներով։[2]

Էջմիածնի շրջանի Խաթունարխ գյուղի կոլտնտեսության օղակավար Ս. Ներսիսյանը խոստացավ 1949 թվին իր օղակի յուրաքանչյուր հեկտար բամբակի ցանքից տալ 40 ցենտներ բերք։ Նա գերակատարեց իր ստանձնած պլանը, երկրին տվեց յուրաքանչյուր մեկ հեկտարից 60 ցենտներ բերք։ Օղակը չտեսնված հաջողության հասավ բերքահավաքի ժամանակ։ Ընկեր Ս. Ներսիսյանը սեպտեմբերի 27-ին հավաքեց 605 կիլոգրամ բամբակ ու կոլտնտեսության ընդունած նորման գերակատարեց 12 անգամ։ Նա իր օղակում այնպես կազմակերպեց ու ղեկավարեց բերքահավաքի աշխատանքները, որ օղակի մյուս անդամները այդ օրը 8—10 անգամ գերակատարեցին բերքահավաքի օրվա առաջադրանքները։ Ռ. Գրիգորյանը հավաքեց 408 կիլոգրամ բամբակ, Դ. Կարապետյանը՝ 406 կիլոգրամ, Հ. Սարգսյանը՝ 346 կիլոգրամ, Ռ. Արշակյանը՝ 302 կիլոգրամ, Օ. Գրիգորյանը՝ 269 կիլոգրամ, Ռ. Հովհաննիսյանը 235 կիլոգրամ, այն դեպքում, երբ կոլտնտեսության միջին նորման հաշվվում էր 50 կիլոգրամ։[3]

Այսպիսով մեկ օրվա ընթացքում օղակի յոթ անդամները հավաքեցին 2571 կիլոգրամ բամբակ։

Աշխատանքի արտադրողականության բարձրացման այս օրինակը եզակի չէ։ Նույն օրերին Հոկտեմբերյանի շրջանի Հոկտեմբերյան գյուղի Լենինի անվան կոլտնտեսությունում կոլտնտեսուհի Ռ. Սաֆարյանը հավաքեց 493 կիլոգրամ բամբակ, Ռ. Պողոսյանը՝ 508 կիլոգրամ, օղակի մյուս անդամներից՝ Ա. Սաֆարյանը՝ 380, Թ. Մարտիրոսյանը՝ 321, Ս. Ղազարյանը՝ 280 կիլոգրամ։

Նույն շրջանի Գետաշեն գյուղում սեպտեմբերի 17-ին կոլտնտեսուհի Ա. Հարությունյանը հավաքեց 547 կիլոգրամ։

Այս օրինակները, ինչպես ամբողջ Սովետական Միության, այնպես էլ Սովետական Հայաստանի բոլոր կոլտնտեսությունների ու կոլտնտեսականների համար անսպասելի սխրագործություններ ու արտակարգ դեպքեր չեն։ Տնտեսության սոցիալիստական սիստեմի հաղթանակը գյուղատնտեսության մեջ, նրա առավելությունները աշխատանքի արտադրողականության սիստեմատիկ բարձրացման գործում, օրինաչափ ու մասսայական բնույթ են կրում, որը հնարավորություն է տալիս ամեն մի կոլտնտեսականի հասնելու ավելի բարձր ցուցանիշների։

Կոլտնտեսությունների դաշտերում մեքենա-տրակտորային կայանների կատարած աշխատանքը ևս նույն պատկերն ունի։

---

[1] „Коммунист„ орган ЦК и ЕК КП(б) Армении от 25/IX 1949 г., Ереван.

[2] Հայկական ՍՍՌ Գիտ. Ակադեմիայի Տնտեսագիտության սեկտորի գիտական արխիվ, ֆոնդ, Հայկական ՍՍՌ կոլտնտեսությունները ստալինյան հնգամյակներում, գործ. աշխատանքի արտադրողականության բարձրացումը։

[3] Նույն տեղում։

Էջմիածնի մեքենա-տրակտորային կայանի տրակտորիստ Բաղդասար Բաղդասարյանը անիվավոր տրակտորով 1948 թվին սահմանված տարեկան պլանը կատարեց 2,6 անգամ, մեկ հեկտար վարի պլանով նախատեսված ինքնարժեքը իջեցրեց մինչև 45 տոկոսով։

Աշխատանքի արտադրողականության բարձրացումն արտահայտող մյուս կարևոր ցուցանիշը բերքատվության բարձրացումն է։

Ռեսպուբլիկայում 1947—1948 թվերին 1946 թվի համեմատությամբ հացահատիկային կուլտուրաների բերքատվությունը բարձրացել է 27 տոկոսով, իսկ առանձին շրջաններում, կոլտնտեսություններում, բրիգադներում ու օղակներում՝ ավելին։

Այսպես, օրինակ, Նոր Բայազետի ամբողջ շրջանում 1947 թվին հացահատիկային կուլտուրաների միջին բերքատվությունը 1940 թվականի համեմատությամբ ավելացավ մոտ 70 տոկոսով, նույնը պետք է ասել Ախտայի, Գոտայքի, Սիսիանի, Աղինի և մի շարք այլ շրջանների մասին։

Նոր Բայազետի շրջանի Բատիկյան գյուղի, «Բատիկյան»-ի անվան գյուղատնտեսական արտելի օղակավար ընկեր Տոնոյանը ընկեր Ստալինին ուղղված նամակում 1947 թվին խոստացավ տալ մեկ հեկտարից 168 փութ հացահատիկ։ Նա գերակատարեց իր այդ խոստումը, բրիգադին կցված 47 հեկտար տարածության յուրաքանչյուր հեկտարից տվեց 192 փութ հացահատիկ (էջ 27, աղ. 3)։

Նույն կոլտնտեսության օղակավար ընկեր Զաղոյանը 30 հեկտար տարածության յուրաքանչյուր հեկտարից ստացավ 180 փութ հացահատիկ։

Ախտայի շրջանի Ներքին Ախտա գյուղի «Շահումյան»-ի անվան կոլտնտեսության օղակավար ընկեր Դ. Հարությունյանը 8 հեկտար աշնանացանի յուրաքանչյուր հեկտարից 1948 թվին ստացավ պլանով նախատեսված 110 փութի փոխարեն 270 փութ հացահատիկ։[1]

* * *

Բերքատվության բարձրացման ավելի ցայտուն օրինակներ կարելի է բերել նաև խաղողագործության բնագավառից։ Այն դեպքում, երբ կոլտնտեսություններում մեկ հեկտարի միջին բերքատվությունը 40—50 ցենտներ էր, առանձին բրիգադներում ու օղակներում այն հասնում է 150—200 ցենտների (էջ 27, աղ. 3)։

Խաղողի բերքատվության բարձրացման այս բարձր ցուցանիշների համար վերոհիշյալ կոլտնտեսություններից մոտ 61 մարդ 1949 թվին պարգևատրվեցին Լենինի, Կարմիր Դրոշի շքանշաններով և մեդալներով։

Այսպիսի բազմաթիվ օրինակներ կարելի է բերել, ցույց տալու համար թե կոլեկտիվ տնտեսության մեջ աշխատանքի արտադրողականության բարձրացման ինչպիսի անսպառ ռեզերվներ գոյություն ունեն։

Գյուղատնտեսության մեջ աշխատանքի արտադրողականության բարձրացման ավելի ցայտուն պատկեր է արտահայտում ստորև բերված

[1] Հայկական ՍՍՌ Գիտ. Ակադեմիայի Տնտեսագիտության սեկտորի գիտական արխիվ, ֆոնդ, Հայկական ՍՍՌ կոլտնտեսությունները ստալինյան հնգամյակներում, գործ. աշխատանքի արտադրողականության բարձրացումը։

աղյուսակը, որը մենք մշակել ենք նկատի ունենալով կիրառված ագրոտեխնիկական սիստեմը, աշխատանքների կատարման նորմատիվները, մեքենայացման աստիճանը և ստացված փաստացի բերքը։

Աղյուսակ 3

Խաղողի բերքատվության առաջավոր օղակներ (1949 թ.)[1]

շրջան	կոլտնտեսություն	օղակ	քանի հեկտար	մեկ հեկտարի միջին բերքը ցենտն.
Արտաշատի	«Փարիզյան կոմունա»	1	3,0	205,0
»	»	2	8,0	126,0
»	»	3	7,0	124,0
»	Աթարբեկյան	1	3,0	161,0
»	»	2	3,0	159,0
»	Սվերդլովի	1	3,1	160,0
»	»	1	3,0	137,4
»	»	3	3,0	121,7
»	Ռեստադատ	1	7,5	160,0
Ռերիայի	Վորոշիլովի	1	3,5	162,5
»	»	2	10,0	125,2

Աղյուսակ 4

Աշխատանքի արտադրողականության բարձրացումը[2] (հացահատիկային կուլտուրաների դեմ). Արարատյան հարթավայրում. 1913 թվին = 100 տոկոսի

	Գյուղացիական տնտեսություններում			Գոլտնտեսություններում	
	1913	1919	1928	1932	1947
Մեկ հեկտար հացահատիկի մշակության համար ծախսված մարդ օրերի դինամիկան	100,0	136,0	97,0	82,0	51,0
Մեկ հեկտար հացահատիկի միջին բերքի դինամիկան	100,0	60,0	120,0	130,0	195,0
Մեկ բանվորական օրվան հասնող հացահատիկի աճը	100,0	44,4	125,0	225,6	400,0

[1] Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության Գերագույն Սովետի 1949 թվի հոկտեմբերի 26-ի հրամանագրից, «Սովետական Հայաստան», 1949 թ. 27 հոկտեմբերի։

[2] Այս, ինչպես և հաջորդ աղյուսակը կազմելիս հաշվումներն արված են՝ հիմք ընդունելով ագրոտեխնիկական միջոցառումները, բերքատվությունը, արտադրության մեքենայացման աստիճանը և արտադրանքի նորմաները։

Եթե կոլտնտեսային ժամանակաշրջանի աշխատանքի արտադրողականությունը համեմատության մեջ ենք դնում ցարական Ռուսաստանի և դաշնակների տիրապետության ժամանակաշրջանի տվյալների հետ, ապա պարզվում է, որ աշխատանքային ծախսումները մեկ հեկտար հացահատիկային կուլտուրայի մշակման համար կրճատվել է 50 տոկոսից ավելի, բերքատվությունը բարձրացել է 95 տոկոսով, իսկ աշխատանքային մեկ օրվա հասանելիք հացահատիկը ավելացել է չորս անդամից ավելի։

Համարյա թե նույն պատկերն է ներկայացնում բամբակենու կուլտուրայի մշակության համար ծախսված աշխատանքը նույն շրջանում։

Աղյուսակ 5

Աշխատանքի արտադրողականության բարձրացումը բամբակագործության բնագավառում

	գյուղացիական տնտեսություններում		կոլտնտեսություններում	
	1913	1919	1937	1949
Մեկ հեկտար բամբակենու մշակության համար ծախսված բանվորական օրերի դինամիկան	100,0	91,8	90,2	115,6
Մեկ հեկտար բամբակենու բերքի աճը	100,0	63,6	136,4	212,1
Մեկ բանվորական օրվան հասնող բամբակի աճը	100,0	69,4	108,0	154,5
Աշխատանքի արտադրողականությունը տոկոսներով 1913 թ. համեմատությամբ	100,0	69,4	132,0	188,9

Ինչպես երևում է բերված աղյուսակի տվյալներից, մեկ հեկտար բամբակենու մշակության համար գործադրված բանվորական օրերի թիվը՝ առաջավոր ագրոտեխնիկայի կիրառման ու բարձր բերքի հետևանքով 1913 թվի համեմատությամբ, 1939 թվին ավելացել է 15,6 տոկոսով, իսկ հացահատիկային կուլտուրաների մշակության համար գործադրված բանվորական օրերի թիվը պակասել է 50 տոկոսով։

Այս հիմնականում հետևանք է այն բանի, որ ներկայումս բամբակագործության բնագավառում կոլտնտեսություններում կիրառվում է անհամեմատ բարձր ագրոտեխնիկա, քան անցյալում՝ թույլ ու անդոր մանր գյուղացիական, թեկուզ և կուլակային խոշոր տնտեսություններում, որի հետևանքով էլ ստացվում էր բավականին ցածր բերք։

Բամբակենու մշակության մի շարք նոր կիրառվող և կամ ագրոտեխնիկական ավելի բարձր հիմքերի վրա կատարվող պրոցեսներ, ինչպես, օրինակ պարարտացումը, սնուցումը, մի քանի անդամ բուժելը, ջրելը, միջշարքային կուլտիվացիան, միջբուսային քաղհանը, ծերատումը, 18—20

ցենտներ բերք հավաքելը՝ անցյալի 7—8 ցենտների դիմաց, բամբակենու մշակման աշխատանքների դեռևս ոչ լրիվ մեքենայացման պայմաններում բարձրացրին գործադրվող բանվորական օրերի բացարձակ թիվը։

Ինչ խոսք, որ թված պրոցեսների մեքենայացումը անհամեմատ կկրճատի աշխատանքային ծախսումները, էլ ավելի կբարձրացնի աշխատանքի արտադրողականությունը, և հիանալի կփոխի հացահատիկային ու տեխնիկական կուլտուրաների բնագավառում աշխատանքային ծախսումների հարաբերակցությունը։

Բամբակագործության բնագավառում աշխատանքային ծախսումների մեծ մասը՝ մոտ 40—50 տոկոսը շատ հաճախ խլում է բերքահավաքը, վերջինս մինչև հիմա գերազանցապես կատարվում է ձեռքով։ Սակայն, այդ հարցը ևս լուծվում է, որովհետև բամբակի բերքահավաքի սովետական կոնստրուկցիայի նոր մեքենաների կիրառումը փայլուն արդյունք է տալիս և մեծ չափով կրճատում ձեռքի աշխատանքը։

Աշխատանքի ամուր, գիտակցական սոցիալիստական կարգապահությունը կոլտնտեսություններում՝ հանրային տնտեսության կազմակերպման ու ամրապնդման հիմքն է, առանց որի կոլտնտեսությունը չի կարող կազմակերպականորեն տնտեսապես ամրապնդվել, չի կարող ապահովել պետական-հասարակական ու կոլտնտեսականների անձնական պահանջները։

Ի տարբերություն աշխատանքի կապիտալիստական կարգապահության, որը ստեղծվում է աշխատավորների տնտեսական ճնշման ու հարբստահարման հիման վրա, աշխատանքի սոցիալիստական կարգապահությունը գոյանում է աշխատավորների արտադրական, ստեղծագործական ինքնագիտակցության ծավալման պրոցեսում, նրանց հասարակական-արտադրական աշխատանքներում հանրային ու անձնական շահագրգռվածության հիման վրա։

Աշխատանքի լիակատար սոցիալիստական գիտակցական կարգապահություն ստեղծելու համար պահանջվում է՝ սիստեմատիկ արտադրակազմակերպական ու քաղաքական դաստիարակչական երկարատև աշխատանք։

Լենինը գրում է։ „Строить новую дисциплину труда, строить новые формы общественной связи между людьми, строить новые формы и приемы привлечения людей к труду, это—работа многих лет и десятилетий.

Это—благодарнейшая и благороднейшая работа.

Счастье наше, что, низвергнув буржуазию и подавив её сопротивление, мы могли завоевать себе почву, на которой такая работа *стала возможной*."[1]

Տնտեսության սոցիալիստական սիստեմի հաղթանակը թե՛ քաղաքում և թե՛ գյուղում ստեղծեց անհրաժեշտ բոլոր պայմանները աշխատանքի սոցիալիստական գիտակցական կարգապահության ստեղծման ու ամրապնդման համար։

Միլիոնավոր կոլտնտեսականներ՝ ազնվությամբ կատարում են գյուղատնտեսական արտելի օրինակելի կանոնադրության վեհ պահանջը՝ «Աշխատել

[1] В. И. Ленин, Соч., том XXV, стр. 151.

ազնվորեն, ենթարկվել կանոնադրության պահանջներին և ընդհանուր ժողովի ու վարչության որոշումներին, պահպանել ներքին կարգի կանոնը, ճշտիվ կատարել վարչության և բրիգադիրի կողմից նրանց հանձնարարված աշխատանքը և հասարակական պարտականությունները, խստիվ պահպանել աշխատանքի կարգապահությունը»[1]

Կոլտնտեսականների ճնշող մեծամասնությունը սրբությամբ կատարում են կանոնադրության այս պահանջը. այդ է ապացուցում կոլտնտեսականների վաստակած աշխօրերի աճը, աշխօրերի մինիմում չկատարող կոլտնտեսականների թվի խիստ պակասումը, աշխատունակ կոլտնտեսականների ավելի մեծ թվով մասնակցությունը հանրային աշխատանքներին, կոլտնտեսային դաշտերի բերքատվության, անասունների մթերատվության բարձրացումը, կոլտնտեսականների նյութական կյանքի սիստեմատիկ բարելավումը, սոցիալիստական մրցման մասսայական բնույթը։

Կոլտնտեսություններում աշխատանքի կազմակերպման, դիտակցական կարգապահության ստեղծման ու աշխատանքի արտադրողականության բարձրացման գլխավոր լծակներից մեկն է սոցիալիստական մրցությունը։

Լենինը և Ստալինը սոցիալիստական մրցությունը դիտել են որպես սովետական հասարակության զարդացման գլխավոր օրենքներից մեկը, որպես նրա առաջընթացի ու բարգավաճման խորը ու հորդառատ աղբյուր։

Ընկեր Ստալինը այդ մասին գրում է «...աշխատանքի ֆրոնտում մենք ունենք մեծադույն նվաճում բանվոր դասակարգի միլիոնավոր մասսաների աշխատանքային խանդավառության ու աշխատանքային մրցականչի ձևով մեր անծայրածիր երկրի բոլոր ծայրերում։ Իսկ այս նվաճման նշանակությունն իսկապես որ անգնահատելի է, որովհետև միլիոնավոր մասսաների աշխատանքային վերելքն ու աշխատանքային խանդավառությունը միայն կարող է ապահովել աշխատանքի արտադրողականության այն առաջընթաց աճումը, առանց որի անհրաժեշտ է սոցիալիզմի վերջնական հաղթությունը կապիտալիզմի դեմ»։[2]

Այդ բանի լավագույն արտահայտությունն է կոլտնտեսությունների, կոլտնտեսային անասնապահական ֆերմաների ու կոլտնտեսականների 1939—1940 թվականներին Գյուղատնտեսական Համամիութենական ցուցահանդեսին մասնակցելու իրավունք նվաճողների թվի աճը, իսկ ներկայումս Սոցիալիստական Աշխատանքի Հերոսի կոչման արժանացածների թվի աճը։

Ընդամենը մեկ տարվա ընթացքում ցուցահանդեսին մասնակցող կոլտնտեսությունների թիվը աճեց ավելի քան երկու անդամ, կամ ռեսպուբլիկայի կոլտնտեսությունների մոտ 50 տոկոսը իրենց լավագույն աշխատանքի համար արժանացան ցուցահանդեսին մասնակցելու բարձր պատվին (տես աղյուսակ 6)։

Արագ կերպով աճել է նաև աշխատանքի արտադրողականության ու որակի բարձր ցուցանիշներ ձեռք բերած կոլտնտեսականների մասնակցությունը ցուցահանդեսին (տես աղյուսակ 7)։

---

[1] Գյուղատնտեսական արտելի օրինակելի կանոնադրություն, էջ 21, հրատ. 1935 թ., Երևան։

[2] Ի. Ստալին, Լենինիզմի հարցերը, էջ 326, Երևան, 1940 թ.։

Աղյուսակ 6

Ռեսպուբլիկայի կոլտնտեսությունների մասնակցությունը 1939—1940 թվի գյուղատնտեսական ցուցահանդեսին[1]

	1939 թ.	1940 թ.
Դաշտավարության գծով	119	216
Անասնապահության գծով	89	264
Պտղաբերության ու խաղողագործության գծով	23	34
ընդամենը	231	514

Աղյուսակ 7

Ռեսպուբլիկայի գյուղատնտեսության առաջավորների մասնակցությունը ցուցահանդեսին[2]

	1939 թ.	1940 թ.
Ընդամենը	1517	3995
Այդ թվում		
դաշտավարության գծով	883	1414
Անասնապահության գծով	285	1088
Պտղաբուծության և խաղողագործության գծով	220	596
գյուղատնտեսական գիտության գծով	47	80

Սոցիալիզմը պահանջում է, որ բոլորն աշխատեն իրենց ուժերի, կարողությունների չափով, աշխատեն ազնվորեն և դրան համապատասխան էլ մասնակցեն հասարակության նյութական բարիքների բաշխման։

Սոցիալիստական թե արդյունաբերության և թե գյուղատնտեսության հարուստ պրակտիկան ցույց տվեց, որ, ինչպես Լենինն է ասում „Социализм не только не угашает соревнования, а напротив, впервые создает возможность применить его действительно *широко*, действительно в *массовом* размере, втянуть действительно большинство трудящихся на арену такой работы, где они могут проявить себя, развернуть свои способности, обнаружить таланты, которых в народе —непочатой родник и которые капитализм мял, давил, душил тысячами и миллионами.“[3]

Ներկայումս սոցիալիստական մրցությունը ավելի խորը ու լայն բնույթ է ստացել, մրցության պայմանագրեր են կնքում, բարձր որակի ու քանակի պարտավորություններ են վերցնում ոչ միայն առանձին կոլտնտեսությունները, բրիգադները, կոլտնտեսականները, այլև շրջանները և նույնիսկ եղբայրական ռեսպուբլիկաների կոլտնտեսություններն ու շրջանները։

[1] Социалистическое строительство Армянской ССР (1920—1940 гг.). стр. 92, изд. УНХУ. Ереван, 1940 г.

[2] Նույն տեղում, էջ 92։

[3] В. И. Ленин, Соч., том XXII, стр. 158.

Արդեն երկրորդ տարին է, որ Սովետական Հայաստանի Ախտայի շրջանի Ֆանտան գյուղի ընկեր Գր. Հարությունյանի անվան կոլտնտեսությունը մրցության մեջ է Սովետական Վրաստանի Կվարելի շրջանի Շիլդա գյուղի ընկ. Կուբրիշևի անվան կոլտնտեսության հետ։

Այս և մյուս կոլտնտեսությունների Սոցիալիստական Աշխատանքի Հերոսների, առաջավորների ու նախագահների փորձի փոխանակման համար տեղի ունեցած հանդիպումները ոչ միայն մեծ օգուտ են բերում իրենց կոլտնտեսություններին, այլև մեծ չափով օգնում են ռեսպուբլիկաների մյուս կոլտնտեսություններին էլ ավելի բարձրացնելու, բարելավելու իրենց աշխատանքները։

Բոլշևիկների պարտիան կյանքում մարմնավորեց Լենինի և Ստալինի ցուցումները սոցիալիստական մրցության մասին, որպես սոցիալիզմի կառուցման կոմունիստական մեթոդ։

Պարտիայի ու պետության ամենօրյա հոգատարության շնորհիվ՝ կոլտնտեսություններում աշխատանքների ճիշտ կազմակերպումը ու աշխատանքի արտադրողականության բարձրացումը հետևանք է նաև այն բանի, որ օրեցօր աճում ու կազմավորվում են կոլտնտեսային կադրերը, նրանք ավելի հմուտ ու բանիմաց են դառնում, ավելի համառ ու հետևողական են պայքարում կոլխոզների ամրապնդման համար։

Մեր Երկրում աճել ու կազմավորվել է սոցիալիստական գյուղատնտեսության կազմակերպիչների մի բազմամարդ բանակ։ Նրանք, այդ կադրերը՝ կոլտնտեսությունների նախագահները, նրանց օգնականները, անասնապահական ֆերմաների վարիչները, բրիգադիրները, հաշվապահները, հաշվետարները, ագրոնոմները, զոոտեխնիկները, և վերջապես բոլոր նրանք՝ հարվածային, ստախանովական կոլտնտեսականները կազմում են կոլտնտեսային արտադրության ոսկե ֆոնդը։ Նրանց նախաձեռնությունից, հանրային արտադրությունը կազմակերպելու հմտությունից ու կարողությունից է կախված սոցիալիստական գյուղատնտեսության աճն ու հետագա վերելքը։

Կոլտնտեսային կադրերի աճը[1]

	1937 թ.		1948 թ.	
	ընդամենը	այդ թվում կին	ընդամենը	այդ թվում կին
Կոլտնտեսության նախագահ	1065	տ. չ.	1042	7
Տեղակալներ, օժանդակ տնտեսության վարիչներ, տնտեսվարներ և այլն	267	9	1453	163
Անասնապահական ֆերմաների վարիչներ .	1322	21	1873	51
Բրիգադիրներ				
ա) բուսաբուծության	3580	37	3958	53
բ) անասնապահության	684	90	3249	62
ագրոնոմ և ագրոտեխնիկ	121	3	391	82
զոոտեխնիկ և անասնարուժակ	272	4	692	88
հաշվապահ և հաշվետար	1468	29	1844	257

[1] Կոլտնտեսությունների 1937 և 1948 թվերի հաշվետվություններից։

Կոլտնտեսային արտադրության կազմակերպիչների ու ղեկավարների այս բազմահազար բանակը աճեց ու զարգացավ կոլտնտեսությունների ներսում կոլտնտեսային գյուղացիությունից, հենց այս է կոլտնտեսային կարգերի հոյակապ առավելություններից մեկը։

Որ սոցիալիզմը մեր երկրում արմատապես փոխել է մարդու վերաբերմունքը աշխատանքի նկատմամբ, որ աշխատանքը դարձել է փառքի ու պատվի գործ, ցույց է տալիս այն հզոր մասսայական շարժումը, որը ծավալվում է աշխատանքի արտադրողականության բարձրացման համար։

Սովետական պետությունը հասարակական փառքի ու պատվի է արժանացնում աշխատանքի առաջավոր մարդկանց։ Որա արտահայտությունն է հազարավոր կոլտնտեսականների պարգևատրումը Սովետական Միության շքանշաններով, մեդալներով, Սոցիալիստական Աշխատանքի Հերոսի բարձր կոչում շնորհելը։

Ներկայումս Սովետական Հայաստանի կոլտնտեսություններում 2583 առաջավոր կոլտնտեսականներ պարգևատրված են Սովետական Միության շքանշաններով ու մեդալներով, որից 117 հոգի արժանացել են Սոցիալիստական Աշխատանքի Հերոսի բարձր կոչմանը։[1]

Սովետական պետության այս միջոցառումները և արտադրության բարձրացման գործում աշխատավորների ցուցաբերած հասարակական ու անձնական շահագրգռվածությունը, լայն հնարավորություններ են ստեղծում, նորանոր ռեզերվներ են բացահայտում աշխատանքի լավ կազմակերպման ու արտադրողականության բարձրացման համար։

Ар. Марухян

Повышение производительности труда в колхозах Советской Армении

(Р е з ю м е)

Труд во всех классовых обществах, предшествующих социализму, является для господствующих классов средством эксплоатации трудящихся масс, источником обогащения эксплоататоров.

При капиталистическом строе труженик скован капиталистическими цепями рабства. Труд для трудящихся—тяжелое ярмо, которое они вынуждены терпеть для поддержания своего жалкого существования.

Благодаря уничтожению капитализма, труд в Советском Союзе перестал быть средством эксплоатации. Он является не только источником существования трудящихся, но и источником увеличения всенародного социалистического богатства, источником повышения благосостояния общества и укрепления могущества Советского государства.

Труд стал делом чести и геройства. Это подтверждается также фактом увеличения числа трудоспособных колхозников, участвующих в общественных работах колхозов. Так, например, число трудоспособных колхозников, принимавших участие в работах колхозов республики, в 1937 г. по сравнению с 1932 годом увеличилось на 142%, а в 1940 г.—на 160%. Число трудоспособных колхозников, занятых в общественных работах в среднем на один колхоз за тот же период увеличилось более чем в два раза.

Движущей силой колхозных масс в их героическом труде является социали-

[1] Հայկ. ՍՍՌ Գիտ. Ակադեմիայի Տնտեսագիտության սեկտորի գիտական արխիվ, ֆոնդ. Հայկ. ՍՍՌ գյուղատնտեսությունը 30 տարում, էջ 9։

стический принцип производства и распределения, по которому каждый получает по количеству и качеству затраченного труда.

Победа социализма в сельском хозяйстве, неограниченное внедрение механизации и новой передовой агротехники, создание технически грамотных передовых кадров изо дня в день расширяют колхозное производство, повышают воловая и товарная продукция и производительность труда.

Важным показателем, отражающим рост производительности труда, является повышение урожайности. Урожайность зерновых культур в 1947—1948 гг. по сравнению с 1946 годом увеличилась по республике на 27%, а в отдельных районах, колхозах, бригадах и звеньях еще больше. Так, например, средняя урожайность зерновых культур в 1947 году по всему Н. Баязетскому району увеличилась более чем на 70%.

Сравнение производительности труда колхозов с производительностью труда в сельском хозяйстве царской России и в годы хозяйничания дашнаков показывает, что в результате уничтожения частной собственности на землю, благодаря многочисленным преимуществам крупного социалистического сельского хозяйства (механизация, электрификация, применение передовой агротехники, социалистическая организация труда), по сравнению с крупными и мелкими капиталистическими хозяйствами, затраты труда на обработку 1 гектара зерновых культур сократились на 50%, урожайность повысилась на 62%, а количество зерновых, приходящихся на один трудодень, увеличилось более чем в три раза.

Вопрос систематического повышения производительности труда тесно связан также с вопросами дальнейшего поднятия социалистической дисциплины и непрерывного ее укрепления. Крепкая, сознательная социалистическая дисциплина является основой организации и укрепления общественного хозяйства в колхозах.

Социалистическая дисциплина труда укрепляется в борьбе за выполнение производственных планов, в борьбе за уничтожение остатков пережитков капиталистического общества в сознании людей

Победа колхозного строя создала прочную основу для воспитания колхозного крестьянства в духе преданности социализму, социалистической родине.

Победа колхозного строя коренным образом изменила условия жизни трудового крестьянства, в корне изменила материальный и духовный облик его. Честное отношение к государственной, кооперативной собственности и к общественному труду стало ведущим принципом жизни колхозников.

Одним из главных рычагов организации сознательной дисциплины и повышения производительности труда в колхозах является социалистическое соревнование. „Живое творчество масс —вот основной фактор новой общественности.. Социализм живой, творческий есть создание самих народных масс". (В. И. Ленин. Собрание сочинений, том 22. 45).

Социалистическое соревнование в наши дни действительно приняло всенародный характер. Оно стало движущей силой каждой фабрики, завода, колхоза, бригады, звена и деятельности каждого трудящегося.

Труд и повышение производительности труда стало делом чести и возвышенных стремлений многомиллионных трудящихся масс нашей страны. Это подтверждается также ростом числа передовиков социалистического сельского хозяйства.

Число передовых колхозов Армянской республики, участвовавших на сельскохозяйственной выставке, в начале 1941 года по сравнению с числом, участвовавших в 1939—1940 гг. возросло в два раза, а число передовых колхозников почти в 3 раза. Из числа передовых людей сельского хозяйства по 1950 год награждены орденами и медалями Советского Союза 2583 человека, из них 117 человек удостоились высокого звания Героев Социалистического Труда.